



<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂԻ<<ՀԱՍՄԻԿ>>ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ >>ՀՈԱԿ

Գ.Արևաշող 10փողոց 17/1 էլ.հասցե edvinakhachatryan11@gmail.com հեռ. +37493441711

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂԻ<<ՀԱՍՄԻԿ>>
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ >>ՀՈԱԿ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

02.09.2025թ.

Ներածություն. Սույն փաստաթուղթը «<< Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի<< Հասմիկ >>մանակապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվությունն է՝համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13 մայիսի 2021 թվականի N 764-Ն որոշման և ՀՀ ԿԳՄՍՆ 1275 Ա/2 12.07.2022թ հրամանի: Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման գործընթաց:

Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝

1) նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնականության ապահովմանը, նախադպրոցական կրթության որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելը.

2) ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորումը.

3) շահառուների՝ սաների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), հաստատության մանկավարժական աշխատողների, նախարարության, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, Սպիտակի համայնքապետարանի, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների շրջանում հաստատության գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը.

4) ուսումնական հաստատությունների հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստելը: Ներքին գնահատումն իրականացված է հաստատության տնօրենի՝

11.08.2025թ. թիվ 18-Լ հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից, որի անդամներն են հանդիսանում՝

- 1) Հ.Խաչատրյան (մեթոդիստ՝ հաստատության մանկավարժական խորհրդի անդամ)
- 2) Ա.Ոսկանյան (բուժքույր՝ հաստատության մանկավարժական խորհրդի անդամ)
- 3) Լ.Անտոնյան (երաժշտ. դաստի հաստատության մանկավարժական խորհրդի անդամ)
- 4) Ե. Քոչարյան Ա. Դադյան (հաստատության ծնողական խորհրդի անդամներ)

5) Ազգանուշ Ֆրանգյան – աշխատակազմի քարտուղար

6) Լիանա Գրիգորյան -մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ/մշակույթի և կրթության գծով/

7) Հանձնաժողովի նախագահ հաստատության տնօրեն՝ Հ.Խաչատրյան
Ներքին գնահատման գործընթացում մասնակցել են նաև հաստատության մանկավարժական կազմը, տնտեսվարը, հաշվապահը, ծնողական խորհուրդների ներկայացուցիչները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ « ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի <<Հասմիկ>> մանկապարտեզ»

Կազմակերպատիրական տեսակը՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
Սեփականության ձևը՝ համայնքային

Հասցե՝ գ.Արևաշող 10փ.17/1 Հեռ.՝ 093441711

Պաշտոնական կայքէջ՝ Spitak.am, ԱՐԵՎԱՇՈՂԻ <<ՀԱՍՄԻԿ >> ՄԱՆԱԿԱՊԱՐՏԵՐ
(Ֆեսթիվալային կայքէջ)

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ
Հաստատությունն իր ներքին գնահատումն իրականացնելիս պետք է առաջնորդվի ստորև բերված հարցաշարերով.

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ
ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից.	√		
բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար.	√		
գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին.	√		
դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից.	√		
ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում	√		

պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.			
--	--	--	--

«ա», «բ» չափանիշների համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը: «ե» չափանիշի համար պետք է հիմք ընդունել հաստատության կողմից համապատասխան կազմակերպությունների (ախտահարման-կանխարգելման, արտակարգ իրավիճակների ծառայության) հետ կնքված պայմանագրերը: Սույն աղյուսակը լրացնելիս ներքևում պետք է նշվի նաև համապատասխան փաստաթղթերի առկայության և գործողության ժամկետների, այդ թվում՝ պայմանագրերի, կատարման մասին:

Հաստատությունն ունի մեկուսացված տարածք ,ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժի համար:

Դիտարկումների և փաստագրումների արդյունքները ներքևում տեղադրված են նկարների տեսքով՝ <<ա>> , <<բ>>: Կատարվում է միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների դեմ :

Հաստատությունը պայմանագրային հիմունքներով համագործակցում է Վանաձորի «Կանխարգելիչ ախտահանման դուստր» ՓԲԸ հետ,պայմանագրի գործողության ժամկետը՝մեկ տարի, որի հիման վրա պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների դեմ:

Թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ միջոցառումներն իրականացվում են համայնքի համապատասխան մարմինների կողմից:

Բակային տարածք/ա/



/բ/





2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրաման, Առողջապահության նախարարի 12 փետրվար 2024 թվականի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ ներմերը):

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է.	√		
բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին.		√	
գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր.	√		
դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով.	√		
ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն).			√
զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով.	√		
է.համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին.	√		
ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին.	√		
թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը.	√		
ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին.	√		
ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր.			√
ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ.		√	

կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է.			
Ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները.	√		
Ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցադրություններով.	√		
Ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով.	√		
Ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին.			
Ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է ռոջապահության նախարարի 2024թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված նորմերին.	√		

«ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ հանձնաժողովն ազատ շարադրանքով պետք է նկարագրի հաստատության տարածքի, շենքի ու շինությունների, գույքի անվտանգ շահագործման, սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները: Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը պետք է նկարագրի առկա իրավիճակը և արձանագրի բացահայտված շեղումներն ու անհամապատասխանությունները: Դիտարկում փաստագրումն իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով: «ա» չափանիշի համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝ կապիտալ, մասնակի կամ ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը: «բ» չափանիշի համար դիտարկում-փաստագրման միջոցով պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է հետևյալ վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն): «Ժբ»- ից «Ժե» չափանիշների համար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սաների և աշխատողների տարհանման խնդիրներին:

Կցել տարահանման պլանի լուսապատճենը:

Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ հաստատության տարածքը, շենքը և գույքը անվտանգ են հաստատության սաների և աշխատակիցների կենսագործունեության համար:

Հաստատության շենքը հիմնանորոգված է, սակայն տասներեք տարվա շահագործման հետևանքով ունի թե՛ ընթացիկ, թե՛ մասնակի վերանորոգման կարիք:

Հաստատությանը կից կա պահեստային մաս, որը նույնպես ունի վերանորոգման կարիք:


Շենքը կայուն է ԱՌԿ պլանով հաստատված վտանգների ազդեցության նկատմամբ: Շենքը չունի ապաստարան:

Ըստ ԱՌԿ պլանի, անհրաժեշտության դերքում, որպես այդպիսին ծառայելու է հարակից տարածքում գործող ՀՀ Լոռու մարզի Արևաշողի միջնակարգ դպրոցում առկա ապաստարանը:

Աշխատողների և սաների անվտանգ տարահանում կազմակերպելու համար խիստ անհրաժեշտ է շինության 2-րդ հարկում տեղադրել դռներ՝ 2-րդ հարկից տարահանում իրականացնելու համար:

Կից նկարներ՝

Խմբասենյակներ








Ննջասենյակներ





Հանդերձարան/միջանցք





Խոհանոց



Պահեստային մաս



Շենքում պահպանվում են անվտանգության կանոններ, առկա է տարահանման պլան: Հաստատությունն ունի Աղետների ռիսկի կառավարման հաստատված պլան՝ ՀՀ Սպիտակ համայնքի ղեկավարի N691 որոշում, տրված 2025 թվականի հուլիսի 26, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային վարչության պետի N95/13-312 գրություն:



Վերլուծել խմբասենյակում մեկ սանին բաժին ընկնող մակերեսին վերաբերող իրավիճակը, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

Խմբասենյակները վերանորոգված են, 1 սանին բաժին է ընկնում 1,3 քմ տարածք, յուրաքանչյուր սան ունի իր հանգստի համար նախատեսված առանձին տարածքը

Խմբասենյակ	Խմբասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ)
Կրտսեր 2-րդ խումբ	37,44 քմ	1,30 քմ	Նորմից պակաս է
Միջին խումբ	37,44 քմ	1,30 քմ	Նորմից պակաս է

Շենքը վերանորոգված է, առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր, ազդարարումը իրականացվում է ձայնային ազդարարման միջոցով:

Շենքը հարմարեցված չէ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների անվտանգ տեղաշարժի համար /թեքահարթակներ, լայն դռներ և այլն/:

Շենքը ունի ընթացիկ վերանորոգման կարիք, դրա մասին վկայում են դիտարկումների արդյունքում արված նկարները, որոնք տեղադրված են:

Շենքը կայուն է վերոհիշյալ վտանգների դեպքում՝ ուժեղ քամիներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն:

Գույքը մաշված է, օգտագործված է արդեն 13 տարի:

Մանկապարտեզի բոլոր հարկերում փակցված են տարհանման պլանները, ուսումնական հաստատության ուղիներն ազատ են:

Մանկապարտեզը լիցենզիավորված չէ, քանի որ բացակայում է տարածքի նկատմամբ իրավունքի(սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականը: Դիտարկման արդյունքները ներկայացված են ներքևում տեղադրված նկարների տեսքով:





Գույք



3.ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՅՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին.	✓	
բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին.	✓	
գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ.	✓	
դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան.	✓	
ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով.	✓	
զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով.	✓	
թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ	✓	
ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարա-գաներով (օճառ, թուղթ և	✓	

այլն).		
Ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեց-ված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը.		✓
Ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
Ժգ.ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ.	✓	
Ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն.	✓	

Այս 14 չափանիշների ամբողջությունը հիմք է հանդիսանում հաստատության ինքնավերլուծության հաշվետվության այս բաժինը կազմելու համար: Առավել ընդգրկուն և համակողմանի վերլուծություն կատարելու համար յուրաքանչյուր չափանիշին պետք է անդրադառնալ առանձին, այնուհետև՝ ընդհանրացնել դրանք: Այս բաժնի վերլուծությունը կատարելիս պետք է ոչ միայն ուսումնասիրել համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը կամ կատարել դիտարկում-փաստագրում ըստ առանձին ցուցանիշների, այլ նաև հարցումներ կարելի է կատարել նաև ծնողների կամ այլ շահառուների շրջանում:

«գ» և «դ» չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները գրանցվում են ստորև բերված աղյուսակում.

Այս չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակիցների թիվը
Հունիս	Միջին	<<Երեխաների իրավունքներն ու պարտականությունները >> Տեսանյութեր,պաստառներ	23 սան,5 ծնող Աշխատակիցներ-4
Փետրվար	Կրտսեր երկրորդ	<<Անվտանգ վարքագիծ՝ փողոց,լուսակիր, փոխադրամիջոց>> պաստառներ,տեսանյութեր,նկարներ:	22սան ,5ծնող Աշխատակիցներ-5

Հաստատությունում առկա է բուժկետ
Հաստատությունը ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այդ կամ ոչ բառերը)
Այո
Ոչ

Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)	Բուժաշխատողներ (թիվը և նրանց պաշտոնները)	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ.		Բուժկետի սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
2-ԲԴ Հարկ 11,348 /քառ.	1անձ Բուժքույր	Ջերմաչափ,, հասակաչափ, կշեռք,մանկական մահճակալ, տեսողության ստուգման աղյուսակ, տոնոմետր, պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղերով, շինա	Այո √	Ոչ	Լավ	Առկա է

Ինքնավերլուծության այս բաժնի կարևորագույն բաղադրիչն է հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանի վերլուծությունը: Նման պլանի առկայությունը, ինչպես նաև դրանում նշված աղետներին պատրաստվածության, հակազդման իրատեսական մեխանիզմների ու միջոցառումների նկարագրությունը հաստատության անվտանգության և ապահովության կարևոր չափանիշներից է: Այս չափանիշին հաստատության համապատասխանության գնահատման նպատակով պետք է նշել, թե արդյոք հաստատությունը մշակել և հաստատել է իր քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես է իրագործվում այդ պլանը, ինչպես նաև նկարագրել քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սաների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների մասին: Կարևոր է նաև հիշատակել, թե արդյոք նախադպրոցական ուսումնական հաստատությունը վարում է իրականացվող վարժանքների և միջոցառումների գրանցամատյան:

Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) պլանի նպատակն է նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՆՈՒՀ) սաների և անձնակազմի անվտանգության և ՆՈՒՀ-ի դիմակայունության բարձրացումն արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) ժամանակ:

ԱՌԿ պլանն ուղղված է՝

ա.ՆՈՒՀ-ի և շրջակա տարածքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմանը (այսուհետ՝ ԱՌՆ),

բ. ԱԻ-ում արագ և արդյունավետ արձագանքմանը,

գ. ՆՈՒՀ -ի գործընթացի անխզելիության և շարունակականության ապահովմանը:

ԱՌԿ պլանի խնդիրներն են՝

ՆՈՒՀ -ի ԱՌԿ համակարգի ձևավորումն ու զարգացումը,

ՆՈՒՀ -ի և շրջակա տարածքում վտանգների բացահայտումը,

ՆՈՒՀ -ի խոցելիության և կարողությունների բացահայտումը,

ԱՌՆ միջոցառումների մշակումը,

գիտելիքի և նորարարության միջոցով սաների, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող սաների և անձնակազմի շրջանում անվտանգության և դիմակայունության մշակույթի ձևավորմանն ուղղված միջոցառումների մշակումը, ԱԻ արձագանքման միջոցառումների մշակումը, այդ թվում՝ կյանքի փրկության և վնասվածքների նվազեցման, ՆՈՒՀ -ի գույքի պահպանման:

<<< Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի <<Հասմիկ>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ԱՌԿ համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում ՆՈՒՀ-ի սաների և անձնակազմի պաշտպանության կազմակերպման նպատակով տնօրենի 2025 թվականի հունիսի 30-ի թիվ 11-Լ հրամանով ստեղծվել է ԱՌԿ խորհուրդ:

Խորհրդում ընդգրկված են մանկապարտեզի աշխատակիցները, ծնողները, ինչպես նաև նշանակվել են ոլորտային պատասխանատուներ:

Արտակարգ իրավիճակների ժամանակ սաների և անձնակազմի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է ԱՌԿ խորհրդի կողմից:

Մանկապարտեզի տնօրենի հրամանով հաստատված N11-Լ հավելվածով որևէ երեք միջոցառում իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարվում է գործողության մեջ դրված:

Նախատեսվում է տարին երկու անգամ հրավիրել ԱՌԿ խորհրդի նիստ (ԱՌՆ միջոցառումների պլան-ժամանակացույց՝ հաստատության տնօրենի հրամանով հաստատված N 3 հավելված):

ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում (Ուղեցույցի N 4 ձև) և կցվում են ԱՌԿ պլանին:

Հաստատությունը մշակել է «Արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպման, իրականացման պլան» կատարում է պլանում նշված գործողությունները:

Պլանը ներառում են հետևյալ տեղեկատվությունը՝ հրդեհաշիջման կազմակերպում, առաջին օգնության կազմակերպում, հոգեբանասոցիալական ազդարարման և իրազեկման կազմակերպում, տարհանման և պատսպարման կազմակերպում, աջակցության կազմակերպում և այլն:

Պլանում սահմանված գործողություններից են՝

- Արտակարգ իրավիճակների վերաբերյալ իրականացվում է անձնակազմի և երեխաների իրազեկում, որպեսզի կանխարգելվի անհանգստությունն ու հասարակական քաոսը:
- Ծնողների հաղորդակցությունը կազմակերպելու համար մատչելի և ապահով վայրում պահվում է երեխաների, աշխատակազմի ու ծնողների ցուցակը:
- Հոգեբանական աջակցության նպատակով տրամադրվում է օգնություն բուռն հուզական ռեակցիաներ դրսևորող երախաներին, ապահովվում է կապ և համագործակցություն մասնագիտական ծառայությունների հետ:

Արտակարգ իրավիճակների հետ կապված երեխաների ուսուցումը իրականացվում է հիմնականում խաղերի միջոցով: Կազմակերպվել է տարահանում տարին երկու անգամ:

ԱՌԿ պլանում, ըստ տեղանքի, առանձնացված են հետևյալ վտանգները՝

Երկրաշարժ,

Ամպրոպ/կայծակ,

Կարկուտ,
Մելավ,
Առատ տեղումներ (ձյուն),
Առատ տեղումներ (անձրև),
Ուժեղ քամիներ,
Հրդեհ,
Պայթյուն,

Համաճարակային բռնկում

Մշակվել են վերոհիշյալ աղետների ռիսկի նվազեցման
միջոցառումներ/Հավելված 1/

Ըստ ԱՌԿ պլանի հաստատությունում կազմակերպվում է ազդարարում և
իրազեկում: Ազդարարման և իրազեկման հիմնական նպատակն է ԱԻ
սպառնալիքի կամ առաջացման և նրա բնույթի մասին անձնակազմին և
երեխաներին նախազգուշացումը, ինչպես նաև տեղեկացումը՝
վարքականոնների, կյանքի և առողջության, ԱԻ հետևանքների մեղմացման
մասին:

Արտակարգ իրավիճակի վերաբերյալ մանկապարտեզի անձնակազմի և
երեխաների իրազեկումն իրականացվում է նրանց մոտ անհիմն մտքերի
հետևանք հանդիսացող անհանգստության և խոսակցությունների ու
բամբասանքի արդյունքում ստեղծված հասարակական քաոսի առաջացումը
կանխարգելելու, հրատապ միջոցառումներ (տարահանում, պատսպարում,
անհատական պաշտպանական միջոցների ապահովում) իրականացնելու և
անձնակազմին ու երեխաներին նորմալ կյանքի վերադարձնելու գործում
աջակցելու համար: Մանկապարտեզն իրականացնում է անձնակազմի և
երեխաների իրազեկումը՝ կիրառելով առկա բոլոր միջոցները:

ԱԻ մասին տեղեկատվությունը ներառում է տվյալներ՝ ԱԻ-ի սպառնալիքի և
առաջացման մասին, ԱԻ-ի մասշտաբի և նյութական կորստի մասին, ԱԻ-ի
հետևանքների մեկուսացման /տեղայնացման/ մասին և ԱԻ-ի գոտում
վիճակի մասին:

Ազդարարման և իրազեկման պատասխանատուն է Լ. Անտոնյան :

Ծնողների հաղորդակցությունը կազմակերպելու համար մատչելի և ապահով վայրում
պահվում է երեխաների, աշխատակազմի ու ծնողների ցուցակը, որում նշվում է
նրանց անուն-ազգանունը, բնակության հասցեն, հեռախոսահամարները և այլ
տվյալներ՝ տպագիր տարբերակով և էլեկտրոնային կրիչների վրա:

ԱԻ առաջացման և սպառնալիքի դեպքում ազդարարումն իրականացվում է
ա. Ազդարարումն իրականացվում է հետևյալ միջոցներով՝



(1) հեռախոսի և սուրհանդակային կապի միջոցով:

Արևաշող բնակավայրում առկա է ազդարարման համակարգ՝ ազդարարման
շչակը Ս-40 տեսակի էլեկտրական շչակ է, որը տեղադրված է Արևաշողի
միջնակարգ դպրոցի տանիքին և գտնվում է մանկապարտեզից 3մ
հեռավորության վրա:

ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքում հաղորդակցությունը
իրականացվում է հետևյալ ուղղություններով՝
տեղական ինքնակառավարման մարմին,

Կից նկաներ՝

[illegible][illegible]



4.ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՌԻՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ.	√	
բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ.	√	

Այս չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակիցների թիվը
Մայիս	Միջին	<<Անվտանգության կանոններ>> Թեմատիկ աստառներ տեսական պատկերներ, լուսացույց, հրշեջ, շտապօգնության, ոստիկանության ավտոմեքենաների նկարներ:	25սան 3 ծնող, աշխատակից
Ապրիլ	Կրտսեր երկրորդ	<<Առաջին Բուժօգնություն>> Սառույցի պարկեր, տոնոմետր, մկրատ, Ստերիլ անձեռոցիկներ, սպիրտ, բամբակ, վիրակապ, քերմաչափ բժշկական ձեռնոցներ:	24սան 20ծնող աշխատակից

5.ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾԵԼ մանկավարժական աշխատողների թվաքանակի, միջին ծանրաբեռնվածության փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

Ցուցանիշը	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024	2024-2025	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը	5	5	4	5	5	Կայուն
Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը	1,25 40 /8ժամյա աշխատանքային ռեժիմ/	1,25 8 ժամյա աշխատանքային ռեժիմ	1,12 8 ժամյա աշխատանքային ռեժիմ	1,12 8 ժամյա աշխատանքային ռեժիմ	1,12 8 ժամյա աշխատանքային ռեժիմ	Կայուն

Մանկավարժական աշխատողների թվաքանակի ծանրաբեռնվածության- փոփոխություններ չի գրանցվել

Տվյալներ հաստատության վարչատնտեսական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Հաշվապահ	Ք.Պետրոսյան	13տարի	13տարի	
Տնտեսվար	Հ.Սահակյան	13տարի	13տարի	
Խոհարար	Ա.Բայախչյան	13տարի	13տարի	
Խոհարարի օգնական	Ա.Թամամյան	3տարի	3տարի	
Դաստ.օգն.	Հ.Հովհաննիսյան	13տարի	13տարի	
Դաստ.օգն.	Ն.Ալավերդյան	13տարի	13տարի	
Բուժքույր	Ա.Ոսկանյան	13տարի	13տարի	
Հավաքարար	Ա.Առաքելյան	2տարի	2տարի	

**Տվյալներ հաստատության վարչատնտեսական կազմի վերաբերյալ
/ՀՀ ԿԳՄՍՆ 20-Ն հրաման տրված <<27>> մարտ 2024թ.**

Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության մանկխորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Է.Խաչատրյա ն	տնօրեն	Բարձրագույն	Ի պաշտոնե 2012թ.	
Կ.Աթիկյան	դաստիարակ	մ/մ	Ի պաշտոնե 2012թ.	
Լ.Պտրոսյան	դաստիարակ	Բարձրագույն	Ի պաշտոնե 2012թ.	
Լ.Անտոնյան	Երաժշտ դաստ.	մ/մ	Ի պաշտոնե 2012թ.	
Ցուցանիշ				
ա. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն գիտական կոչում.		-		

բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում.	-Մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից <<Մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ>> ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստումներին և համարվում են վերապատրաստված մասնագետներ՝ ԿԶՆԱԿ Գործադիր տնօրեն Ա.Թորոսյանի N 42 հրանան, տրված 06 նոյեմբեր 2024թ. <<Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ>> ծրագրի շրջանակներում վերապատրաստված ՆՈՒՀ-երի տնօրենների անվանացանկ՝ N 245/հավելված 1/ և <<Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ>> ծրագրի շրջանակներում վերապատրաստված մանկավարժական աշխատողների անվանացանկ՝ Լոռու մարզ՝ N105, N106, N107, N108/հավելված 2/: -Հաստատության տնօրենը հավաստագրված է՝ ԿԳՄՍՆ Հավաստագիր Սերիա՝ Ա N0861, -Մասնակցել է Ուսուցիչների Ուսումնափորձարարական Համայնքի/ՈՒՈՒՀ/ և Մասնավոր նախադպրոցական հաստատությունների ասոցիացիայի /կողմից կազմակերպված <<Նախադպրոցական երեխային ընդառաջ>> չորրորդ ամենամյա համաժողովին, Մասնակցել է նաև Թիչինգ Ըքսպերտի վերապատրաստող կազմակերպության կողմից կազմակերպված <<Նախադպրոցական կրթական հաստատության ղեկավարի իրավական դաշտը>> և <<Տնտեսվարի և խոհարարի աշխատանքային գործառույթները նախադպրոցական ուսումնական հաստատությունում >> վերապատրաստումներին և ստացել հավաստագրեր: -Մասնակցել են նաև ՈՒՈՒՀ և ԽՍ.Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից կազմակերպված <<Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն >> նոր մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման մասին առցանց հանդիպմանը: -Մանկավարժական աշխատողները 2025թ. դեկտեմբերի 10-ին մասնակցել են նաև ԿԳՄՍՆ և ՅՈՒՆԵՍԿՖ-ի համագործակցությամբ կազմակերպված <<Կրթությունը սկսվում է ինձանից>> մարզային աշխատաժողովին -Մասնակցել են նաև ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված 2-օրյա վերապատրաստումներին/2025թ.-ի հուլիսի 28-ից մինչև 2025թ.-ի օգոստոսի 4-ը /: -Պետրոսյան Լիլիթ ՎՊՀ Վկայական N ՆՈՒՀ 74(մասնակցել է ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը):
---	---

	-Կարինե Աթիկյան ՈՒՆԻ վերապատրաստողի հավաստագիր <<Քայլ առ քայլ>>ԲՀ <<Թիչինգ Ըբադեմի >>ՍՊԸ վկայագիր N 98 (մասնակցել է ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը)
գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ.	
դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը.	40
ե. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն միջազգային ու տեղական պարբերականներում(ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ.	-
զ. մանկավարժական աշխատողներից քանիսն են ուսումնական գործընթացում կիրառում ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /S<S/.	Մանկավարժական աշխատողները վարում են էլեկտրոնային մատյաններ/emis.am/, կիրառում են ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /S<S/.
ը. որքան է մանկավարժական աշխատողների բացակայությունների ընդհանուր թիվը.	0

Տվյալներ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. սահմանված ժամկետում ձևավորվել է սաների համակազմը՝ ըստ տարիքային խմբերի	√	
բ. ուսումնական հաստատությունում իրականացվում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան.	√	
